

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/32Ե

ք. Երևան

« 30 » « 09 » 2021թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Ա. Ազատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված S-7-48, Գյուլրի (S-7-58) - Արևիկ - Այգեբաց - Վարդաքար - /Z-21/ ավտոճանապարհի կմ10+900 - կմ16+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի ակթանեղի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի (Հավելված N 2):

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, կթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

#### 3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### 3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### 3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ուլ սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և

ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

**4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 18 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

- 1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:
- 2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:
- 3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:
- 4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝
  - ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,
  - բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:
- 5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ

շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 513 650 000 (հինգ հարյուր տասներեք միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 85 608 333.33 (ութանասուներեք միլիոն վեց հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:<sup>31</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱՄՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

<sup>31</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնու մեկնման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի և կատարմամբ, որը շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառու ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի 1-ին հատվածի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,  
ՀՀ կենտրոնական գանձապետարան  
ՀՀ 900011025823  
ՀՎՀՀ 02815457  
գլխավոր քարտուղարին փոխարինող  
Ա. Ազատյան



**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Մերձմոսկովյան» ԲԲԸ  
ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն  
«Ինտելոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ  
ՀՀ 2050122011531001  
ՀՎՀՀ 05800698  
տնօրեն  
Ա. Աղամյան



Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

**ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ  
ՉԱՓԱԲԱԺԻՆ 1**

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**S-7-48, Գյումրի (S-7-58) - Արևիկ - Այգեբաց - Վարդաքար - /Z-21/ ավտոճանապարհի կմ10+900 - կմ16+200 հատվածի  
հիմնանորոգման աշխատանքների  
(Ընդհանուր)**

ՀՀ հազար դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չափավոր միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
<b>I. Հողային աշխատանքներ</b>					
1	9Ժ-V կ. բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ	մ <sup>3</sup>	84,8	4.96	420.608
2	Նույնը h=0.5-1.0մ	մ <sup>3</sup>	175	3.92	686
3	Նույնը h=1-2մ	մ <sup>3</sup>	250	2.58	645
4	Ծածկոցներ մետ թիթեղից d=10մմ բեռնավորված բետոնե բլոկներով	մ <sup>3</sup>	509.8	5.67	2890.566
5	Նախորոք փխրեցված 9Ժ-V կ. բնահողի մշակում էքս. 1.0մ <sup>3</sup> շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	615	1.65	1014.75
6	Նախորոք փխրեցված 9Ժ-V կ. բնահողի մշակում բուլդ., տեղափոխում 50մ կուտակումով, բարձում ա/ի էքս. 1.0մ <sup>3</sup> շ.տ. և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	355	2.11	749.05
7	Նախորոք փխրեցված 9Ժ-V կ. բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	49.6	4.55	225.68
8	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ <sup>3</sup> շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	4655,53	1.45	6750.519
9	10e-IV կ. բնահողի մշակում բուլդ., տեղափոխում 50մ կուտակումով, բարձում ա/ի էքս. 1.0մ <sup>3</sup> շ.տ. և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	3327.8	1.86	6189.708
10	10e-IV կ. բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	605.5	3.72	2252.46
11	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 20մ լիցք (հարթում, ջրում, խտացում)	մ <sup>3</sup>	357,9	0.62	221.898
12	Գոյություն ունեցող 33գ-III կ. կույտերի բարձում էկս. 1մ <sup>3</sup> շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 1կմ	մ <sup>3</sup>	252,0	0.66	166.32
<b>Ընդամենը I</b>					<b>22212.559</b>
<b>II. Կողային առու</b>					
1	9Ժ-Vկ. բնահողի փխրեցում մանր պայթանցքային լիցքերով h<0.5մ	մ <sup>3</sup>	107,6	4.96	533.696
2	Ծածկոցներ մետ թիթեղից d=10մմ բեռնավորված բետոնե բլոկներով	մ <sup>3</sup>	107.6	5.67	610.092
3	Կողային առվի իրականացում նախորոք փխրեցված 9Ժ-Vկ. բնահողում էքս 0.65մ <sup>3</sup> շ.տ., բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	215.2	1.65	355.08
4	Կողային առվի իրականացում 10e-IVկ. բնահողում էքս 0.65մ <sup>3</sup> շ.տ., բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	1044.6	1.45	1514.67

Ընդամենը II					3013.538
<b>III. Երթևեկելի մաս</b>					
1	Մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ տիպ "Ե"	մ <sup>2</sup>	32794,4	4.59	150526.296
2	Հիմք պատրաստի խճային խառնուրդից մշակված բիտումով 3.5% ըստ քաշի h=6սմ (բարձր ծակոտկեն ա/բ)	մ <sup>2</sup>	32794,4	2.8	91824.32
3	Խճավազային հիմք (C-5) h=15սմ խիճ (40-70)մմ - 10% - 1.95մ <sup>3</sup> խիճ (20-40)մմ - 35% - 6.825մ <sup>3</sup> խիճ (10-20)մմ - 20% - 3.9մ <sup>3</sup> խիճ (5-10)մմ - 10% - 1.95մ <sup>3</sup> խիճ (0-5)մմ - 25% - 4.875մ <sup>3</sup> (ավազ) ջուր-1.1մ <sup>3</sup>	մ <sup>2</sup>	33683	1.72	57934.76
4	Հատիկավոր ենթահիմք (ավազակոպիճ h=10 սմ)	մ <sup>3</sup>	4749,88	4.85	23036.918
<b>Տեխ. անցում</b>					
1	Բետոնե ծածկի իրականացում B-20 h=20սմ	մ <sup>2</sup>	108	18.6	2008.8
2	Ավազակոպճային շերտ h= 15սմ	մ <sup>3</sup>	16,2	4.85	78.57
Ընդամենը III					325409.664
<b>IV. Կողնակ</b>					
1	10e-IVկ. բնահողի մշակում էքս 1.0մ <sup>3</sup> շ.տ., բարձում ա/ի և տեղափոխում 2.0կմ (պահեստավորում)	մ <sup>3</sup>	1835.57	2.48	4552.214
2	Նախօրոք պահեստավորված 10e-IV կարգի բնահողի բարձում էքս. 1.0մ <sup>3</sup> շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 2.0կմ (հարթում,ջրում, խտացում)	մ <sup>3</sup>	1835,57	2.48	4552.214
3	Կողնակների իրականացում ավազակոպճային նյութով h=4սմ	մ <sup>2</sup>	11376,1	0.31	3526.591
Ընդամենը IV					12631.018
<b>V. Իջատելեր և մուտքեր</b>					
1	10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 20մ, կուտակումով, բարձում ա/ի էքս. 0.65մ <sup>3</sup> շ.տ. և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	100	2.11	211
2	10eIV կարգի բնահողի մշակում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	23,5	4.55	106.925
3	Ե տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ	մ <sup>2</sup>	1554.13	4.55	7071.292
4	Խճավազային հիմք C-5 h=12սմ խիճ (40-70)- 10% - 1,56մ <sup>3</sup> խիճ (20-40)- 35% - 5,46մ <sup>3</sup> խիճ (10-20)- 20% - 3,12մ <sup>3</sup> խիճ (5-10)- 10% - 1,56մ <sup>3</sup> խիճ (0-5)- ավազ 25% - 3,9մ <sup>3</sup> ջուր-1.1մ <sup>3</sup>	մ <sup>2</sup>	1612.99	1.35	2177.5365
<b>Մետ. խողովակներ Ø 530/7մմ</b>					
5	10eIV կարգի բնահողի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	19,2	4.55	87.36
6	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ <sup>3</sup>	1,95	4.85	9.46
7	Մետ. խողովակների Ø 530/7մմ տեղադրում	զծմ	30	74.38	2231.40
8	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ <sup>2</sup>	43.93	1,9	83.47
9	Միաձույլ բետոնե B-20 գլխամասեր	մ <sup>3</sup>	4,8	87.8	421.44
10	Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ <sup>2</sup>	18	1,4	25.20
<b>Մետ. խողովակներ Ø 273/5մմ</b>					
11	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ <sup>2</sup>	0.0209	0,5	0.010

12	Մետ. խողովակների Ø 273/5մմ տեղադրում	զծմ	59	26.86	1584.740	
13	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ <sup>2</sup>	47.15	1.9	89.585	
14	Վաքի հետ միացման միաձույլ բետոն B-20	մ <sup>3</sup>	0.2	98.15	19.630	
<b>Ջրընդունիչ 90զծմ</b>						
15	Ավազակոպձային շերտ h=10սմ	մ <sup>3</sup>	6.3	4.85	30.555	
16	Միաձույլ բետոն B-20	մ <sup>3</sup>	10.80	98.15	1060.02	
17	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ <sup>2</sup>	68.40	1.4	95.76	
<b>Ամրաններ</b>						
18	Ø12 A-500C	տ	0,957456	702.5	672.613	
19	Ø8 Ac-I	տ	0,17775	702.5	124.869	
20	Ցանց	տ	5,227596	743.8	3888.286	
<b>Տեխ անցում</b>					0	
21	Միաձույլ բետոն B-20	մ <sup>2</sup>	144	15.4	2217.6	
22	Ավազակոպձային շերտ h=15սմ	մ <sup>3</sup>	21,6	4.85	104.76	
23	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ	մ <sup>3</sup>	36	4.55	163.8	
<b>Ընդամենը V</b>					<b>22477.306</b>	
<b>VI. Սայթեր</b>						
1	Բետ. Եզրաքարի քանդում էկս. 0,65մ <sup>3</sup> , շ.տ. Բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1 կմ	մ <sup>3</sup>	85,8	1.47	126.126	
2	Բետ. սալիկների ձևավոր տեղադրում, մոխրագույն h=6սմ	մ <sup>2</sup>	2401,94	8.05	19335.617	
3	Ավազային շերտ h=9սմ	մ <sup>3</sup>	216,17	5.17	1117.599	
4	Բետոնե եզրաքար 15x30 սմ (հավաքովի)	զծմ	2080,00	8.75	18200	
5	- Ավազակոպձային շերտ h= 5սմ 1զծմ - 0,0125 մ <sup>3</sup>	մ <sup>3</sup>	26,00	4.85	126.1	
6	Միաձույլ բետոնե եզրաշար B-20 10x20սմ	մ <sup>3</sup>	36,20	72.3	2617.26	
7	- Ավազակոպիձ h=5սմ 1 զծմ - 0,005 մ <sup>3</sup>	մ <sup>3</sup>	9,05	4.85	43.8925	
8	Միաձույլ բետոնե եզրաշար B-20 20x50 սմ	մ <sup>3</sup>	17,16	72.3	1240.668	
9	- Ավազակոպձային շերտ h= 5սմ 1զծմ - 0,01 մ <sup>3</sup>	մ <sup>3</sup>	1,72	4.85	8.342	
<b>Ընդամենը VI</b>					<b>42815.604</b>	
<b>VII. Հավաքովի ե/բ 30x34սմ վաքեր</b>						
1	Ավազակոպձային շերտ h=10սմ	մ <sup>3</sup>	76,05	4.85	368.843	
2	Ե/բ 30x34 վաքերի տեղադրում	զծմ	1170	19.2	22464	
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ <sup>2</sup>	1474,2	1.4	2063.880	
<b>Ընդամենը VII</b>					<b>24896.723</b>	
<b>VIII. Նշագծում</b>						
<b>Նշագծման ընդհանուր մակերեսը այդ թվում՝</b>						
1	հոծ գիծ 1.1	(0,1)	կմ	0,511	113.6	58.050
2	ընդհատվող գիծ 1.5	1:3 (0,1)	կմ	4,083	62	253.146
3	ընդհատվող գիծ 1.6	3:1 (0,1)	կմ	0,7	82.6	57.820
4	նշագծում		մ <sup>2</sup>	0.8591	1.86	1.598

5	Արհեստական անհարթություն	h <sub>մթ</sub> = 7սմ	մ <sup>2</sup>	114	6.6	752.400
<b>Ընդամենը VIII</b>						<b>1123.014</b>
<b>IX. Ճանապարհային նշաններ</b>						
<b>Նոր ճան. նշանների տեղադրում, այդ թվում՝</b>						
1	- նախազգուշացնող		հատ	58	32	1856
2	- առավելության		հատ	23	32	736
3	- արգելող		հատ	12	32	384
4	- հատուկ թելադրանքի		հատ	4	32	128
5	- տեղեկատվության		հատ	5	26.8	134
6	- լրացուցիչ տեղեկատվության		հատ	8	26.8	214.4
7	- հատուկ թելադրանքի		մ <sup>2</sup>	8,7822	39.2	344.262
8	- տեղեկատվության		մ <sup>2</sup>	3.6	37.2	133.92
9	Բետոն B-15		մ <sup>3</sup>	10,815	46.5	502.898
10	Կանգնակ մետ. խող. 57մմ/4մմ		հատ	103	11.3	1163.9
11	Գոյություն ունեցող ճան. նշանների ապամոնտաժում		հատ	3	4.1	12.3
<b>Ընդամենը IX</b>						<b>5609.680</b>
<b>X. Արգելափակոցներ</b>						
1	Նոր մետաղական արգելափակոցներ, թիթեղ δ=4մմ, քայլը 4մ, շվեկեր N16, h=1,75մ.		զծմ	560	24	13440
2	ուղղորդ պոնոններ (պոլիմերային) C-1 տեղադրում		հատ	220	5.25	1155
<b>Ընդամենը X</b>						<b>14595</b>
<b>XI. Դիտահորեր</b>						
1	Դիտահորերի բարձրացում (տրոգում) միաձույլ բետոնով B-20		մ <sup>3</sup>	0,24	62	14.88
2	Նոր ե/բ սալ թուջե կափարիչով և դիտանցքով		հատ	2	147.8195	295.639
<b>Ընդամենը XI</b>						<b>310.519</b>
<b>XII Կամուրջ Կմ 15+098</b>						
1	Վերանորոգման աշխատանքներ իրականացնելու ընթացքում տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորող ճան. նշանների պատրաստում և տեղադրում՝ հետագա կազմատումով և վերադարձ 50%: Նախազգուշացնող-1.20.2(1 հատ),1.20.3(1 հատ),1.25(2 հատ),1.33(2 հատ): Առավելության-2.6 (1 հատ), 2.7 (1 հատ): Արգելող - 3.20 (2 հատ), 3.24 (2 հատ), 3.31 (2 հատ): Թելադրող - 4.2.2 (1 հատ):		հատ	25	28.9	722.5
2	Երթևեկային մասի քայքայքավ ա/բ ծածկի, կոպիճի, պաշտպանիչ շերտի ամրանավորված բետոնի, ջրամեկուսացման, հարթեցնող շերտի ցեմենտային շաղախի: կազմատում գրեյդերով, տեղափոխում 25մ հեռավորության վրա կույտավորում: Բարձրում ա/ի 0,65մ <sup>3</sup> շ.տ. էքս. և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա:		մ <sup>3</sup>	73,085	22.73	1661.22205

3	Բազրիքների կազմատում բարձում ա/ի 5տ բ.բ. ինքնագնաց պաքավոր ամբարձիչով և վերադարձ սեփականատիրոջը:	տ	1,89	28.9	54.621
4	Կամրջատակի, մուտքի և ելքի հունի ուղղում, մաքրում և գրունտի հեռացում 0,65մ <sup>3</sup> շ.տ էքսկավատորով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1կմ հեռավորության վրա:	մ <sup>3</sup>	146	1.95	284.7
5	Նույնը կենցաղային աղբը:	մ <sup>3</sup>	87,0	1.95	169.65
6	Հենարանների երկայնքով խրամուղիների փորման հողային աշխատանքներ ձեռքով, կրկնակի գցումով, գրունտի բարձում ա/ինքնաթափ (71%) և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա:	մ <sup>3</sup>	13,8	4.95	68.31
7	3-րդ հենարանի քանդված հատվածի նորոգում (լրացում) միաձույլ բետոնով:	մ <sup>3</sup>	0,25	118.8	29.700
8	Եզրային հենարանների իրաններում հորատանցքերի հորատում (հորիզոնական) d=40սմ (L <sub>1</sub> =15սմ), հետագա վերանորոգման նպատակով:	հատ	76	0.3	22.8
9	Նույնը՝ միջանկյալ հենարանների իրաններում:	հատ	190	0.3	57
10	Եզրային հենարանների իրաններում պողպատե խարիսխների Ø16 AIII պատրաստում և տեղադրում:	տ	0,0324	702.5	22.761
11	Նույնը՝ միջանկյալ հենարանների իրաններում:	տ	0,081	702.5	56.903
12	Եզրային հենարանների իրանների վերանորոգում միաձույլ ամրանավորված բետոնով, ա.պ. Ø10 AIII=51,5կգ/մ <sup>3</sup> :	մ <sup>3</sup>	5,5	129.1	710.050
13	Նույնը՝ միջանկյալ հենարանների իրանները, ա.պ. Ø10 AIII=54,14կգ/մ <sup>3</sup> :	մ <sup>3</sup>	13,9	129.1	1794.490
14	Խրամուղիների հետլիցք ձեռքով: Գրունտի տեղադրում շերտերով ջրի լցաբաշխումով և խտացում պնևմատոփանով:	մ <sup>3</sup>	9,8	1.86	18.228
15	Հունի ամրացման կոնստրուկցիաների համար խրամուղու փորման հողային աշխատանքներ 0,65մ <sup>3</sup> շ.տ. էքսկավատորով:	մ <sup>3</sup>	16,5	1.65	27.225
16	Խճային նախապատրաստական շերտի իրականացում հենակային ատամի տակ:	մ <sup>3</sup>	1,3	12.2	15.86
17	Մուտքում հենակային ատամի միաձույլ բետոն:	մ <sup>3</sup>	8,52	118.8	1012.176
18	Վաքի իրականացման համար խճային նախապատրաստական շերտի իրականացում:	մ <sup>3</sup>	21,6	12.2	263.52
19	Վաքի միաձույլ բետոն:	մ <sup>3</sup>	43,2	118.8	5132.16
20	Թոփքային կառուցվածքի սալի եզրերի պողպատե ցանցեր Bp Ø4 100x100 մմ P=23,6կգ: Թոփքային կառուցվածքի սալի եզրերի տորկրետավորում M200 ցեմ. շաղախով:	մ <sup>2</sup>	15,3	5.36	82.008
21	Թոփքային կառուցվածքի սալի տակի պողպատե ցանցեր Bp Ø4 100x100 մմ P=271,5կգ: Թոփքային կառուցվածքի սալի տակի տորկրետավորում M200 ցեմ. շաղախով:	մ <sup>2</sup>	140,4	5.36	752.544

22	Գոյություն ունեցող պարապետների վերանորոգում ցեմ. ավազային շաղախով H=3սմ (ներսի և վերևի մակերևույթները):	մ <sup>2</sup>	45,6	2,9	132.24
23	Ե/բետոնե պարապետների մեջ ուղղահայած անցքերի գայլիկնում d=30մմ հետագայում ներդիր մասերի խարիսխների տեղադրման նպատակով: Անցքերի լրացում էպոքսիդա-ցեմենտային շաղախով պոմպի ստեղծած ճնշման տակ:	հատ	224	0,3	67.2
24	Պողպատե ներդիր մասերի պատրաստում և տեղադրում, --10x100x150մմ, n=56 հատ, P=0,066 տ; խարիսխներ AE 12AIII, l=0,52 մ, n=112 հատ, P=0,052տ:	տ	0,118	877	103.486
25	Պողպատե բազրիքների պատրաստում և մոնտաժ H=0,65 մ ներկումով: L 63x63x6մմ -- L=17,64 մ, P=100,94 կգ; L 50x50x5մմ -- L=82,32 մ, P=310,80 կգ; L 70x70x6մմ -- L=41,58 մ, P=266,0 կգ; --5x50մմ --- L=4,68 մ, P=9,60 կգ; AE 12 --- L=105,84 մ, P=95,20 կգ:	տ	0,78254	1136	888.965
26	Թռիչքային կառուցվածքի ձախ կողմում (անվահրիչի բլոկի և մայթի հատվածում) միաձույլ բետոնի իրականացում:	մ <sup>2</sup>	36,20	4,64	167.968
27	Երթևեկային մասի հոսքային եռանկյունի միաձույլ բետոնից:	մ <sup>2</sup>	96,79	4,64	449.106
28	Հարթեցնող շերտի ցեմենտային շաղախ անվահրիչների բլոկների և մայթի սահմաններում H=2սմ:	մ <sup>2</sup>	36,21	1,86	67.351
29	Թռիչքային կառուցվածքների ստանձային ջրամեկուսացում երկշերտ իզոգամից H=0.8սմ:	մ <sup>2</sup>	159,6	2,48	395.808
30	Ցեմենտային շաղախ անվահրիչների բլոկների և մայթի սահմաններում H=2սմ:	մ <sup>2</sup>	36,21	1,86	67.3506
31	BP-1 մակնիշի անվահրիչների բլոկեր. չափ 60x65x300սմ, քաշը 1.25տ; ա.պ. AI=30.34 կգ/մ <sup>3</sup> , AIII=173.10կգ/մ <sup>3</sup> :	մ <sup>3</sup>	7,0	290	2030
32	Խճային նախապատրաստական շերտի իրականացում մայթի սահմանում:	մ <sup>2</sup>	23,47107	12,2	286.347
33	Պաշտպանիչ շերտ մոնոլիտ բետոնից W6, H=4սմ ամրանավորված ցանցով (100x100)մմ Ø4 Bp- I, P=0.2362 տ:	մ <sup>2</sup>	119,3	5.36	639.448
34	Երթ. մասի մանրահատիկ ա/բ ծածկի իրականացում. ա) ներքին շերտ H=4սմ:;	մ <sup>2</sup>	119,3	4,6	548.78
35	Երթ. մասի մանրահատիկ ա/բ ծածկի իրականացում. բ) վերին շերտ H=3սմ:	մ <sup>2</sup>	123,5	3,46	427.31
36	Մայթի ավազային ասֆալտ:	մ <sup>2</sup>	23,4	3,61	84.474
37	Անվահրիչների և պարապետի ուղղահայաց զմանշում:	մ <sup>2</sup>	66,9	1,86	124.434
38	Անվտանգության գոտիների հորիզոնական զմանշում-հոծ:	մ <sup>2</sup>	4,3	1,86	7.998
<b>Ընդամենը XII</b>					<b>19446.693</b>

**XIII Կամուրջ Կմ 15+397.5**

1	Վերանորոգման աշխատանքներ իրականացնելու ընթացքում տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորող ճան. նշանների պատրաստում և տեղադրում՝ հետագա կազմատումով և վերադարձ 50%: Նախագուշացնող-1.20.2(1 հատ), 1.20.3(1 հատ), 1.25(2	հատ	25	28,9	722.5
---	---	-----	----	------	-------

	հատ), 1.33(2 հատ): Առավելության-2.6 (1 հատ), 2.7 (1 հատ): Արգելող – 3.20 (2 հատ), 3.24 (2 հատ), 3.31 (2 հատ): Թելադրող – 4.2.2 (1 հատ):				
2	Երթևեկային մասի քայքայրավ ա/բ ծածկի, պաշտպանիչ շերտի ամրանավորված բետոնի:, ջրամեկուսացման, հարթեցնող շերտի ցեմենտային շաղախի: կազմատում գրեյդերով, տեղափոխում 25մ հեռավորության վրա կույտավորում: Բարձում ա/ի 0,65մ <sup>3</sup> շ.տ. էքս. և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա:	մ <sup>3</sup>	6,84	22.73	155.4732
3	Պողպատե բազրիքների կազմատում բարձում ա/ի 5տ բ.բ. ինքնագնաց սլաքավոր ամբարձիչով և վերադարձ սեփականատիրոջը:	տ	0,36	28.9	10.404
4	Ե/բ մայթերի բլոկների կազմատում 5տ բ.բ. ինքնագնաց սլաքավոր ամբարձիչով: չափ. 58x140x299սմ, քաշը-1,55 տ.բարձում ինքնաթափ և վերադարձ սեփականատիրոջը:	մ <sup>3</sup>	2,5	26.85	67.125
5	Կամրջատակի, մուտքի և ելքի մաքրում գրունտից ձեռքով կրկնակի գցումով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա:	մ <sup>3</sup>	24,5	4.95	121.275
6	Հենարանների վերանորոգում ցեմենտային շաղախով h=3սմ:	մ <sup>2</sup>	3,71	2.9	10.759
7	Վաքի հավաքովի ե/բ պատերի կարերի լրացում ցեմ. ավազային շաղախով h=5սմ:	զմ	10	0.4	4
8	Խճային նախապատրաստական շերտի իրականացում հենակային ատամների տակ:	մ <sup>3</sup>	0,64	12.2	7.808
9	Մուտքում հենակային ատամի միաձույլ բետոն:	մ <sup>3</sup>	2,12	118.8	251.856
10	Ելքում հենակային ատամի իրականացում:	մ <sup>3</sup>	3,18	118.8	377.784
11	Վաքի իրականացման համար խճային նախապատրաստական շերտի իրականացում:	մ <sup>3</sup>	7,2	12.2	87.84
12	Վաքի միաձույլ բետոն:	մ <sup>3</sup>	20,1	118.8	2387.88
13	Ռիսբերմայի քարային լիցք:	մ <sup>3</sup>	13,9	12.4	172.36
14	Մուտքում, աջ կողմում, վաքի տուֆից քարային շարվածքով պատի փլուզված հատվածի վերականգնում համանման:	մ <sup>3</sup>	0,945	18.6	17.577
15	Չախ կողմի մայթի բլոկների տեղադրման համար միաձույլ բետոնի իրականացում h=15սմ:	մ <sup>2</sup>	6	12.4	74.4
16	Հարթեցնող շերտի ցեմենտային շաղախ մայթի բլոկերի սահմաններում H=2սմ:	մ <sup>2</sup>	12	1.65	19.8
17	Հոսքային եռանկյունու իրականացում միաձույլ բետոնից H <sub>վրջ.</sub> =10,6սմ:	մ <sup>2</sup>	45,6	4.95	225.72
18	Թռիչքային կառուցվածքի սոսնձային ջրամեկուսացում երկշերտ իզոզամից H=0.8սմ:	մ <sup>2</sup>	60,0	2.48	148.8
19	Ցեմենտային շաղախ մայթերի բլոկների տակ H=2սմ:	մ <sup>2</sup>	12	1.65	19.8
20	T-1-0,75 մակնիշի մայթերի բլոկների տեղադրում թռիչքային կառուցվածքում ինքնագնաց սլաքավոր 5տ բ.բ. ամբարձիչով: չափ. 58x140x299սմ, քաշը - 1,55տ: ա.պ. AI=89,84կգ/մ <sup>3</sup> , AIII=66,61կգ/մ <sup>3</sup> :	մ <sup>3</sup>	2,5	247.9	619.75
21	Պաշտպանիչ շերտ մնուլիս բետոնից W6, H=4սմ ամրանավորված ցանցով (100x100)մմ Ø4 Bp- I, P=0.0903 տ:	մ <sup>2</sup>	45,6	5.36	244.416
22	Մայթերի բլոկների վրա պողպատե բազրիքների իրականացում և տեղադրում ներկումով.	տ	0,26044	1136	295.860

	L 63x63x6 մմ L=7,84 մ, P=44,84 կգ; L 50x50x5 մմ L=23,52 մ, P=88,80 կգ; L 70x70x6 մմ L=11,88 մ, P=76,0 կգ; -5x50 մմ L=0,78 մ, P=1,6 կգ; Ø12 L=55,44 մ, P=49,2 կգ:				
23	Երթ. մասի մանրահատիկ ա/բ ծածկի իրականացում.ա) ներքին շերտ H=4սմ;	մ <sup>2</sup>	45,6	4.6	209.76
24	Երթ. մասի մանրահատիկ ա/բ ծածկի իրականացում. բ) վերին շերտ H=3սմ:	մ <sup>2</sup>	48	3.46	166.08
25	Մայթերի անվահրիչների ուղղահայաց գծանշում:	մ <sup>2</sup>	8,6	1.86	15.996
26	Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում-հոծ:	մ <sup>2</sup>	1,2	1.86	2.232
<b>Ընդամենը XIII</b>					<b>6437.255</b>

**XIV Մետաղական ժարտ=325մմ խողովակների տեղադրում**

1	Հողային աշխատանքներ հունի ուղղման համար ձեռքի աշխատանքով բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 1կմ. հեռ. վրա	մ <sup>3</sup>	2,50	4.55	11.375
2	Հող. աշխատանքներ խողովակի փոստրակների փորման համար ձեռքի աշխատանքով բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 1կմ միջին հեռ.	մ <sup>3</sup>	8,50	4.55	38.675
3	Հող. աշխատանքներ խողովակի փոստրակների փորման համար ձեռքի աշխատանքով կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ <sup>3</sup>	10,50	4.13	43.365
4	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ <sup>3</sup>	1,85	4.85	8.973
5	Ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B 20, F100	մ <sup>3</sup>	1,97	98.1	193.257
6	Գլխամասերի կառուցում միաձույլ բետոնից B20, F100				
	հիմքեր	մ <sup>3</sup>	0,41	87.8	35.998
	իրաններ	մ <sup>3</sup>	0,51	87.8	44.778
7	Վաքի միաձույլ բետոն B20 F100	մ <sup>3</sup>	0,12	77.5	9.3
8	Ուրմակապային ամրաններ Ø16 A500c l=45սմ	տ	0,00852	702.5	5.985
9	Մետաղական ժարտ=325մմ խողովակի տեղադրում 1գծմ=54,90կգ, պատի հաստ. 7մմ	գծմ	31,70	33	1046.1
10	Քավածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով				
	խողովակ	մ <sup>2</sup>	30,82	1.9	58.558
	բետոն	մ <sup>2</sup>	17,29	1.4	24.206
11	Հետադարձ լիցք ձեռքի աշխատանքով	մ <sup>3</sup>	10,50	1.13	11.865
12	Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում	տ	0,2163	772	166.984
13	Գոյություն ունեցող ջրհորի քանդում հետահար մուրճով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա	մ <sup>3</sup>	2,70	5.16	13.932
<b>Ընդամենը XIV</b>					<b>1713.350</b>

**XV Մետաղական ժարտ=720մմ խողովակների տեղադրում**

1	Հողային աշխատանքներ հունի ուղղման համար ձեռքի աշխատանքով բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 1կմ. հեռ. վրա	մ <sup>3</sup>	28,0	4.55	127.4
2	Հող. աշխատանքներ խողովակի փոստրակների փորման համար էքս.1,0մ <sup>3</sup> շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 1կմ	մ <sup>3</sup>	35	1.65	57.75

	հեռ. վրա				
3	Հող. աշխատանքներ խողովակի փոստրակների փորման համար էքս.1,0մ <sup>3</sup> կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ <sup>3</sup>	46	1.65	75.9
4	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ <sup>3</sup>	1,81	4.85	8.779
5	Խճային հիմք h=30սմ	մ <sup>3</sup>	21,80	12.2	265.96
6	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100				
